

ԱՌԱԾՔ ԱԶԳԱՅԻՆՔ

— Աղքատն ունէր հաց ու պանիր, զիւերը
քունը չէր տանիր:

— Ամենը իրեն տունը, ոսկի սնտուկը մեր
տունը:

— Ամեն ծաղիկ իր տեղին ունի, ամեն հասակ
իր պէտքն ունի:

— Ամեն ջուր գերան չի բերեր:

— Այլոց համար լաց լինողը, իրեն աչքերից կը
զրկուի:

— Անձկացած բանին մի ափսոսալ, անհաւատ
բանին մի հաւատալ:

— Անժամանակ խօսող խօսողի գլուխը կը
բուժէ:

— Ասեր են առ ու տուր, և ոչ թէ առ ու կուշ:

— Բարեկամը գլխին կը նայի, թշամին օտ-
քին:

— Բրգօղն դիտէ, ուսողն ինչ գիտէ:

— Գարնան գառն է գոգէլի, աշնան հաւը:

— Գեղը կը նստիս, գաւառ կը հաշտ:

— Գինի խմողը կը հարբի, կոժւ գնացողը կը
մեռնի:

— Դատարկ կարասի ձայնը՝ բարձր գոչու-
կու գայ:

— Դեռ չի ծնած էրեխին շոր մի կարեր:

— Դուռք փակ պահէ, գրացիք գող մի բռն-
ներ:

— Եղբոր որդի՝ իւր որդի, քրոջ որդի՝ շան
որդի:

— Երկաթը տաք տաք կը ծեծեն:

— Երկար պայով մարդը ախմախ կը լինի,
կարճ պայովը չափմախ:

— Զանգակի ձայնը հեռուանց ըստ կու գայ:

— Իծը իր ոտքովը կան կու տան, ոչխարը իր:

— Էջը գատի, ձին ուտի:

— Ընչաք հասար բարակի, բարակին հոգին
գոչու կու գայ:

— Թրի կտրածը կը սաղնայ, Լեզուինը չի սաղ-
նար:

— Խմաստունի հետ քար կրէ, յիմարի հետ
փլատ մի ուտեր:

— Ինը չի տուած՝ տասը ձեռք չի ընկիր:

— Ինչ ընեմ աշխարհի հարստութիւնը, երբ
կօշիկս նեղ է ոտքիս:

— Ինչ կը բրգես ան կ'ուտես, ինչ կ'ստես ան
կը լսես:

— Ինչ տեղ գինի, ան տեղ քնի:

— Ինչ տեղ հաց, ան տեղ կայ:

— Ինչ տեղ քթոց, ան տեղ կ'թոց:

— Իրեն յարգը չիմացողը, այլոց յարգը ինչ
կ'իմանայ:

— Խեղքը հասակումը չէ՝ գլխումն է:

— Խօսքը մեծին, լուրը պղտկին:

— Մերանաս՝ ծերի զատը կ'իմանաս:

— Մովը ընկեր՝ ձեռքը քցում է փրփուրին:

— Կատուին խաղ, մկանը մահ:

— Կայ, ոտքիս տեղ անեմ, տես գլխիդ ինչ
կ'անես:

— Կայրը ինչպէս նայում է Աստուծոյն, նոյն-
պէս ալ Աստուծան նայում է կուրին:

— Կուշար սովածին մանր կը բրգէ:

— Կուգտան հաւն աման կ'ըլլայ:

— Զուկը գլխին կը հոտի:

— Զանձն ինչ է որ ձենձն ինչ լինի:

— Մահը մէկ օր, լացը մէկ օր:

— Մեղքը լաւով, պարտքը տալով:

— Մէկ Աստուծան, անթիւ ստեղծուած:

— Շատ մի սիրեր՝ ասեւ կայ, շատ մի տանր՝
սիրել կայ:

— Շատ գիտցողը շատ կը սխալի:

— Ո՛վ կը խաղայ, նա կը կաղայ:

— Ո՛վ որ փող ունի՝ խեղճ շունի, ո՛վ որ խեղճ
ունի՝ փող չունի:

— Զունին փող, մտիւր հող:

— Պահէ դարմանը, կու գայ ժամանակը:

— Զուրը ընկնողը անձրեւէ չի վստիսար:

— Զուրը իր գնացած տեղովը կ'երթայ:

— Փախած ձուկն մեծ կը լինի:

— Քամին բերածը քամին կը տանի: